ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Անժամանակ մահը մեր շարքերից խլեց մեծավաստակ հայագետ-արևելագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Տեր-Ղևոնդյանին։

Հանգուցյալը մեկն էր այն գիտնականներից, որն իր ամբողջ գիտակցական կյանքը անընդհատորեն նվիրել էր հայրենի գիտության զարգացման ու առաջընթացին։



Դպրոցական ուսումնառության ավարտը Կահիրեում զուգադիպեց այն բուռն ոգևորության տարիներին, երբ երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո ծայր էր առել ի սփյուռս աշխարհի ցրված հայ համայնքների զանգվածային հայրենադարձությունը։ Եվ ահա Մայր Հայրենիքի կանչին ակնդետ, ուսման ծարավի իանդավառ պատանին, իր գերդաստանի հետ. բազմահազար այլ եգիպտահայերի ուղեկցությամբ, ոտք դրեց հայրենի հողին և անմիջապես ընդունվեց Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան բաժինը։ Փայլուն տիրապետելով արաբերենին, նա այստեղ հետևում է իրանական բաժնի դասընթացներին, ձեռք բերելով ևս մեկ արևելյան լեզվի իմացություն։ Ուսման ընթացքում բախտորոշ եղավ նրա ծանոթությունը մեծանուն հայագետ, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի հետ. մեծ գիտնականը անմիջապես նկատեց նրան՝ ուղղություն տալով, խրախուսելով և սատարելիանելով նրա գիտական մղումներին։

Համալսարանի նորոգ շրջանավարտ Ա. Տեր-Ղևոնդյանը ամենահամապատասխան թեկնածուն եղավ 1955 թ. արաբական աղբյուրների գծով ԳԱ պատմության ինստիտուտի հայտարարած ասպիրանտական տեղի համար։ Ասպիրանտական ուսումնառության տարիներն անցան Լենինգրադի արևելագիտության ինստիտուտում։ «Դարձյալ ինձ բախտը ժպտաց, իմ գիտական ղեկավարը ակադեմիկոս Հովսեփ Օրբելին էր»,— հաճախ շեշտում էր նա։ Եվ իրոք, այդ հմուտ ղեկավարության և ջանասեր աշխատանքի շնորհիվ հասունացավ և հայագիտության անդաստանը ոտք դրեց լենինգրադյան արևելագիտական դպրոցի արժանավոր սաներից մեկը, որի պաշտպանության ներկայացրած թեկնածուական դիսերտացիոն աշխատությունը՝ «Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում», բարձր գնահատականի արժանացավ գիտական շրջանակներում և ճանաչված բյուզանդագետ Ն. Գարսոյանի կողմից թարգմանվեց անգլերեն։

1958—1981 թթ. բեղուն գործունեությունը ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում ծավալվեց աղբյուրագիտության-բնագրագիտության, պատմագրական և պատմաբանասիրական ուղղություններով։ Ագաթանգեղոսի Պատմության արաբական խմբագրության լիակատար բնագրի հայտնաբերումն ու նրա մեջ այդ անհայտ հատվածի ուսումնասիրությունն ու գիտական հրատարակությունը (1963 թ.) Ա. Տեր-Ղևոնդյանին տարավ դեպի այդ կարևոր սկզբնաղբյուրի առավել բազմակողմանի հետազոտման, որի արդյունավետ հետևանքներն եղան նախ «Պատմության» և ապա, գրաբար բնագրին զուգահեռ, ամբողջական աշխարհաբար թարգմանությունն—

,րի հրատարակությունները (1977, 1983)։ Ավելի ուշ նա կատարեց նաև իր պատմագիտական հետազոտությունների հետ սերտորեն առնչվող, VIII դարի պատմիչ Ղևոնդի Պատմության աշխարհարար թարգմանությունը (1987 թ.)։

Սակայն Ա. Տեր-Ղևոնդյանի հիմնական հետազոտությունների բնագավառը VII—XII դդ. Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության հարցերն են եղել։ Այդ շրջանի հայկական, առավել ևս արաբական սկզբնաղբյուրների համակողմանի համեմատական ուսումնասիրությունները հիմք հանդիսացան ոչ միայն արժեքավոր հրապարակումների, ինչպիսին էր XII—XIII դդ. արաբ պատմիչ Իբն-ալ-Ասիրի՝ Հայաստանում արաբական նվաճումների ու տիրապետության, Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական թագավորությանը վերաբերող ընդարձակ հատվածների հայերեն թարգմանությունն ու ուսումնասիրությամբ և հարուստ ծանոթագրություններով օժտված հրատարակությունը, այլ նաև ծնունդ տվին բազմաթիվ այլ մեծ ու փոքր ուսումնասիրությունների, աղբյուրագիտական և բանասիրական ուշագրավ նորույթներ պարունակող հոդվածների ու գիտական հաղորդումների։

Լայն ու բազմաբովանդակ է եղել Ա. Տեր-Ղևոնդյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը։ Քաջ տիրապետելով արևելյան ու եվրոպական մի քանի լեզուների, նա կարճ ժամանակում ոչ միայն կարողացավ հայ աղբյուրների հետ համադրությամբ խորազնին ուսումնասիրության ենթարկել արաբական աղբյուրների հարուստ տվյալները, այլև քննադատաբար յուրացնել արևմտյան արևելագիտական և հայագիտական գրականությունը։ Այդ նպատակասլաց հետազոտությունների արդյունքը եղան մեր պատմության մի քանի հանգուցային հարցերի լուսաբանմանը նվիրված հայերեն, ռուսերեն, ինչպես նաև ֆրանսերեն հոդվածները։

Արաբական խալիֆայության և Բագրատունյաց Հայաստանի ժամանակաշրջանի պատմաաշխարհագրական, վարչական և սոցիալ-տնտեսական խնդիրների վերաբերյալ մի քանի տասնյակ ուսումնասիրությունների հրապարակումը որոշակի ճանաչում բերեց Ա. Տեր-Ղևոնդյանին որպես պատմական այդ ժամանակահատվածի հրմուտ աղբյուրագետի ու պատմաբանի։ Այն միաժամանակ հիմք հանդիսացավ «Հայաստանը և Արաբական խալիֆայությունը» ռուսերեն ծավալուն մի մենագրության, որը լույս տեսավ 1977 թ., նրա հեղինակին շնորհելով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։

Իր գլխավոր գիտահետազոտական պրպտումներին զուգահեռ Ա. Տեր-Ղևոնդյանը կատարել է նաև հայ և արաբ մատենագրական, բնագրագիտական և վիմագրական նյութի բազմաթիվ ուշագրավ ուսումնասիրություններ և հրապարակումներ։ Մի շարք հոդվածներ նվիրված են հայ և քրիստոնյա արաբական մատենագրական առնչություններին, արաբական մատենագրության մեջ հայ ժողովրդի ծագման, սովորույթների, առասպելների ու լեգենդների արձագանքների հրապարակմանն ու գիտական քննությանը։ Նա քաջատեղյակ էր հայրենի և արտասահմանյան հայագիտության և արևելագիտության ընթացքին։ Միշտ հետևելով հրատարակչական նորույթներին ու գիտական մամուլին, նա հաճախ հանդես էր գալիս արժեքավոր գրախոսություններով և քննադատական հոդվածներով։

Ա. Տեր-Ղևոնդյանը իր նշանակալից ավանդն ունի Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ստեղծման գործում։ Նրա գրչին են պատկանում II և III հատորների այն բաժինները, գլուխներն ու ենթագլուխները, որոնք վերաբերում են VII—IX դդ. քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությանը, մինչև XII դարը ներառյալ պատմական Հայաստանի տարածքում արաբական և այլ մահմեդական իշխանությունների համակարգին, արաբական երկրներում հայկական գաղթօջախներին ու հայարարական քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերին։ Նույնպիսի նվիրվածությամբ նա շարունակում էր մասնակցել նաև մեր պատմության ռուսերեն չորհատորյակի շարադրման ու խմբագրական աշխատանքներին։ Նշանակալից է նաև նրա մասնակցությունը Հայկական սովետական հանրագիտարանում։ Մեծ հետաքրքրությամբ էին լսվում նրա զեկուցումներն ու գիտական հաղորդումները ինչպես մեր հանրապետության, այնպես նաև միութենական ու միջազգային գիտական կոնֆերանսներում ու գիտաժողովներում։ Նրա յուրաքանչյուր հաղորդում Մոսկվայում պարբերաբար կայացող Բարտոլդյան ընթերցումներում պարունակում էր գիտական ինքնատիպ մի նորույթ և լսվում էր մեծ ուշադրությամբ։

1981 թ. ի վեր Ա. Տեր-Ղևոնդյանը գլխավորում էր ԳԱ արևելագիտության ինստիտուտի աղբյուրագիտական և բնագրագիտական բաժինը, որտեղ կենտրոնացված էին արևելյան երեք լեզուներով՝ արաբերեն, պարսկերեն և թուրքերեն, ինչպես նաև հայերեն պատմագրական, մատենագրական, վիմագրական հուշարձանների ուսումնասիրության, հրապարակման և թարգմանչական աշխատանքները։ Մեծ հոգատարությունն ու մտահոգությունը հայ արևելագիտության ավանդները շարունակելու և ձեռնհաս մասնագետներ պատրաստելու ուղղությամբ, Ա. Տեր-Ղևոնդյանին մղում էին դեպի հետևողական, անձանձիր աշխատանքի, որը և արդեն սկսել էր տալ առաջին պտուղները։ Այդ մասին են վկայում բաժնի

աշխատակիցների ու ասպիրանտների պաշտպանության ներկայացրած դիսերտացիոն աշխատություններն ու գիտական հրատարակությունները։

Արդյունավետ ու բեղմնավոր էր նաև Ա. Տեր-Ղևոնդյանի ուսումնամանկավարժական գործունեությունը Երևանի պետական համալսարանի արևելյան ֆակուլտետում, որտեղ նա դասախոսում էր «Արաբական երկրների հին և միջին դարերի պատմություն», «Արաբական բանասիրության ներածություն» առարկաները և մասնագիտական այլ հատուկ կուրսեր, ղեկավարում և գրախոսում էր շրջանավարտների ավարտաճառերը, օգնում, խրախուսում և ուղղություն էր տալիս գիտական աշխատանքի հակումներ դրսևորող ուսանողներին։

Բարձր գնահատելով նրա ավանդը արաբագիտության բնագավառում, Հալեպի համալսարանի ղեկավարությունը նրան ընտրել էր գիտության պատմության ինստիտուտի պատվավոր անդամ, իսկ 1936 թ. նա ընտրվեց նաև Հռոմի Տիբերինի ակադեմիայի պատվավոր անդամ։

Ա. Տեր-Ղևոնդյանը միաժամանակ ինտելեկտուալ բարձր արժանիքներով օժտված շիտակ ու ազնիվ անձնավորություն էր, մեծ հայրենասեր ու բաղաքացի, մինչև վերջը նվիրված իր ժողովրդին։ Թիկունքում ունենալով ավելի քան 30-ամյա գիտական աշխատանքի համընդհանուր ճանաչում գտած վաստակ, նա գտնվում էր ստեղծագործական ուժերի հարաճուն ծաղկման շրջանում, լի նոանդով՝ շարունակելու բեղմնավոր գործունեությունը և հարստացնելու հայրենի գիտությունը նորանոր մեծարժեք գործերով։ Ու թեև տարաժամ մահը եկավ ընդհատելու արգասավոր կյանքը, սակայն եղած վաստակով արդեն նա իր ուրույն ու որոշակի տեղն ունի գրված հայագետ-արևելագետների պանթեոնում։

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ